4906

313
Ζ-94

1932

313 / Հ-94 1864 ակ
4023-5
12001

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ 1932 ԹՎԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ—ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՆԵՏՈՒՆ ՇՐՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ազգաբնակության տված տեղեկությունների ստուգման նպատակով, ամեն մի շրջանում հաշվառքն (ազգաբնակության հարցաքննությունը) ավարտելուց անմիջապես հետո կազմակերպվում է ընտրովի տնետուն շրջում և նրանցում յեղած անասունների փաստացի քանակի հաշվում:

2. Ամեն մի շրջանում տնետուն շրջումը կազմակերպվում է մի քանի գյուղում: Այդ գյուղերը ընտրում է Հաշվառքի Շրջանային Հանձնաժողովը, այն հաշվով, վոր նրանք նախ՝ կազմեն ամբողջ գյուղխորհրդի 1/4-ից վոչ պակաս մասը, յերկրորդ՝ վերցվեն գտնվեն շրջանի տերիտորիայի զանազան մասերում և յերրորդ՝ վերցվեն ընտրվեն ամեն մի գյուղխորհրդից վոչ ավել, քան յերկու գյուղ:

3. Ամեն մի ընտրված գյուղում Շրջանային Հանձնաժողովը վորոշում է շրջման յենթակա տնտեսությունների և կոլտնտեսությունների թիվը,

յելնելով այն հաշվից, վորպեսզի բոլոր գյուղերում սահմանված շրջման յենթակա տնտեսությունների և այնի թիվը լինի վոչ պակաս, քան շրջանի բոլոր անհատական և կոլտնտեսայինների կոլտնտեսությունների 2% և կոլտնտեսությունների ու ապրանքային ֆերմաների 10% (տես հրահանգի 6-րդ կետը):

Համատարած կոլեկտիվացման շրջաններում, վորտեղ անհատական տնտեսությունների թիվն աննշան է, շրջման յենթակա տնտեսությունների տոկոսն ավելացվում է, կամ շրջվում են բոլոր տնտեսությունները (շրջման համար վորոշված թվի սահմաններում):

4. Ընտրված գյուղերի ցուցակների և շրջման յենթակա տնտեսությունների թվի մասին շրջանային հանձնաժողովը հաղորդում է գյուղխորհուրդների հաշվառքի հանձնաժողովներին, շրջումը կատարելու համար:

5. Գյուղխորհրդի հաշվառքի հանձնաժողովներն ընտրված գյուղերի տնե-տուն շրջումը սկսում են այդ գյուղերի հաշվառքի վերջանալուց անմիջապես հետո:

6. Մանր բնակավայրեր ունեցող շրջաններում տնետուն շրջումը կատարվում է ընտրված գյուղերի բոլոր տնտեսություններում. խոշոր գյուղերում շրջման յենթակա տնտեսություններն ընտրում է գյուղխորհրդի հանձնաժողովը՝ ըստ տնատերերի այն ցուցակների, վորոնցով կատարված է ազգաբնակության հարցաքննությունը, ըստ վորում, ընտրվում է ամեն մի 5-րդ տնտեսությունը: Այն դեպքում, յերբ ընտրությունն ընկնում է անասուն չունեցող տըն-



տեսության վրա, ապա այդպիսին փոխարինվում է հետևյալ՝ անասուն ունեցող տնտեսությամբ:

7. Տնե-տուն շրջման արդյունքները գրվում են հատուկ «տնետուն շրջման տնաթերթերի» վրա: Հարցաթերթերը լրացվում է ամեն մի շրջման յենթակա տնտիրոջ, կամ կոլտնտեսության համար առանձին — համայնացված անասունների քանակն ստուգելիս:

8. Մինչև շրջման սկիզբը հանձնաժողովը նախորոք պատրաստում է հարցաթերթերը, այսինքն՝ լրացնում է նրանց հասցեային մասը (շրջանի, գյուղխորհրդի, գյուղի անունը), տնտիրոջ ազգանունը, անունն ու հայրանունը և արտագրում է այնտեղ անասունների հաշվառքի ցուցակում ցույց տրված համապատասխան տնտիրոջ անասունների քանակը:

9. Տնետուն շրջումն անհրաժեշտ է կատարել մեկ օրվա ընթացքում: Ուստի և խոշոր գյուղերում, վորտեղ շրջման յենթակա տնտեսությունների թիվը մեծ է, հանձնաժողովը բաժանվում է 2 բրիգադայի:

10. Շրջման ժամանակ հանձնաժողովն ամեն մի տնտեսության մեջ հաշվում և ստուգում է յեղած անասունների փաստացի թիվը, պարզում է, թե արդյոք տնտեսությանը պատկանող բոլո՞ր անասուններն են գտնվում տանը և քանի՞սն են գտնվում տանից դուրս: Վերջինիս քանակը վորոշվում է տնտիրոջ հարցաքննությամբ:

11. Կոլտնտեսայինների անասունների փաստորեն ստուգումը կատարվում է միայն չհամայնացրած անասունների վերաբերմամբ, համայնացրած, բայց կոլտնտեսայինի տանը գտնված անասուննե-

րըն ստուգման մեջ չեն մտնում, փոխարենը ստուգվում են կոլտնտեսության անասուններն ստուգելիս։

12. Տնետուն շրջելիս հանձնաժողովը կատարում է հետևյալ աշխատանքները․

ա) Վորոշում է տվյալ տանտիրոջ պատկանող անասունների քանակը, տանը գտնվող անասուններին նայելու, իրեն՝ տանտիրոջ, իսկ կասկածելի դեպքերում, նաև հարևանների հարցաքննության միջոցով, անասունների քանակը գրվում է հարցաթերթի 2-րդ սյունյակում։

բ) Համեմատում է շրջման ժամանակ վորոշված անասունների քանակը հարցաքննության ժամանակ գտնվածի (հարցաթերթի № 1 սյունյակում արձանագրվածի) հետ և նրանց միջև տարբերություն յեղած դեպքերում, պարզում այդ բանի պատճառները։ Տարբերությունը կարող է հետևանք լինել կամ տանտիրոջ, հարցաքննության ժամանակ թաքցնելու և կամ հարցաքննությունից մինչև շրջման օրը անասունների քանակի միջև տեղի ունեցած փոփոխությունների (սատկել է, մորթված է ևայլն)։ Ստուգման արդյունքները գրվում են 3-րդ սյունյակում, վորտեղ վերևի տողում ցույց է տրվում սատկած, սպանված, մորթված և կամ ներքևի տողում հարցաքննության ժամանակ թաքցված անասունների քանակությունը։

գ) Հանձնաժողովը պարզում է, թե 1932 թ. հունվարի ընթացքում տնտեսության անասունների ինչպիսի՞ աճում է յեղել, ինչպիսի՞ ավելացումներ են յեղել (ծնված է, ստացված է և այլն) և դրա հիման վրա վորոշում է տնտեսության մեջ քանի՞ անասուն



է յեղել առ 1-ն հունվարի 1932 թ. (առանց հասակային խմբերի բաժանելու)։

Գլուխների թիվն առ 1-ն հունվարի ստացվում է հետևյալ կերպով. շրջման ժամանակ վորոշված անասունների ընդհանուր քանակից (ըստ «ընդամենը» տողի) հանվում է հունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը ժամանակաշրջանում յեղած բոլոր ավելացած անասունները (աճումը, գնվածները և այլ ձեռք բերվածները) ըստ «ընդամենը մուտք» տողի և ստացված մնացորդին ավելացվում «ընդամենը պակասորդ» տողի տվյալները։ Որինակ՝ առ 1-ն փետրվարի, հաշվառքի ժամանակ տնտեսության մեջ կար ընդամենը 8 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, շրջման ժամանակ պարզված է ընդամենը 9 գլուխ, հունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը ավելացում է գրված 3 գլուխ և պակասորդ 1 գլուխ։ Այդպիսի դեպքում «առ 1-ն հունվարի 32 թ. կար» սյունակում գրվում է 7 գլուխ, յելնելով հետևյալ հաշվից. 9-3+1=7։

Անասունների քանակը առ 1-ն հունվարի գրվում է միայն գումարների սյունյակներում։ Խաչ նշանով նշանակված սյունյակները չեն լրացվում։

13 Կոլտնտեսություններում անասունների հաշվառքի տվյալներն ստուգվում է, կամ կոլտնտեսության մեջ յեղած անասունների փաստացի քանակը հաշվելու, կամ ընդհանուր ժողովում կոլտնտեսության անդամների հետ ունեցած զրույցի միջոցով, ստուգման արդյունքները գրվում են տնետուն շրջման հարցաթերթում։ Հարցաթերթը լրացնելիս պետք է ի նկատի ունենալ. 1) 2-րդ հարցում գրվում

և․ ա) կոլտնտեսության տերրիտորիայի վրա գտնվող «(տնտեսության մեջ» հարցաթերթերում) և բ) կոլտնտեսության տերրիտորիայից դուրս գտնվող («տնտեսությունից դուրս» — հարցաթերթում) անասունների քանակը․ 2) հարցաթերթի ստորին մասը «անասունների քանակի փոփոխությունը հունվ․ 1-ից մինչև փետրվ․ 1-ը» կոլտնտեսությունների համար չի լրացվում։

14․ Հարցաթերթերը հարկավոր տեղեկություններով լրացնելուց հետո հանձնաժողովի կամ բրիգադայի նախագահը ներքև գրում է — յե՞րբ է լրացվել հարցաթերթը — և ստորագրում։

15․ Հաշվառքի ցուցակներում, շրջման տվյալների հիման վրա ոչ մի դեպքում, ոչ մի փոփոխություն չի մտցվում։

16․ Շրջման բոլոր տվյալներն ու նյութերն ուղարկվում են շրջանային ղեկավարին, վերջինս շրջման բոլոր նյութերն ուղարկում է Ժող․ Տնտ․ Հաշվառքի հանրապետական վարչությանը, մշակման համար։

---

Ա. Ց. Մյասնիկյանի անվ. տպ. հրատ. «Զարյա Վոստոկա»-ի

Պատվեր 288 Գլավլիտ 217 Քանակ 355

41
1932/126
313
2-94
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0038909